ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ. ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆԸ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգային բանախօսութիւններ, Յառաջաբանը եւ ծանօթագրութիւնները՝ Լ. Սարվազեանի, Ս. Էջմիածին, 2018, 368 էջ։

Մաղաքիա արք. Օրմանյանի բազմահատոր ժառանգության հերթական անդրադարձն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սույն հրատարակությունը, որը հնարավորություն է ընձեռում ընթերցողին առաջին անգամ, մեկ ընդհանուր ժողովածուով, ծանոթանալու մեծ հայի եւ նշանավոր հոգեւորական-գիտնականի ազգային բանախոսություններին։ Սա նաեւ հարմար առիթ է մեկ անգամ եւս քննարկելու, արժեւորելու եւ գնահատելու հայոց ազգային մշակույթը, պատմությունը, ազգ ու հայրենիք գաղափարները, «Հայուն անցեալը, ներկայն եւ ապագայն» (էջ 21)՝ ինչպես վերնագրել է իր բանախոսություններից մեկը մեծ հայը։

Ընդհանրապես Մաղաքիա արք. Օրմանյանի կյանքին, գործունեությանը, հոգեւոր-գրական ժառանգությանը անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ ու հետազոտողներ եւ, կարելի է ասել, նրա մասին գրեթե ամեն ինչ ասված է։ Սակայն սույն ժողովածուն մեկ անգամ եւս հնարավորություն է տալիս անդրադառնալու հոգեւորական-գիտնականի՝ հայ ժողովրդի ազգային հիմնահարցերին նվիրված մոտեցումներին, մտքերին ու գաղափարներին՝ դրանք դիտարկելով ոչ միայն իր ժամանակի հոլովույթում, այլ նաեւ ժամանակակից, արդի գործընթացների դիտանկյունից, քանի որ «հայ ժողովուրդ», «ազգ», «հայություն», «պետություն», «Եկեղեցի» եւ այլ հասկացություններին վերաբերող հիմնահարցերի մեծագույն մասն այժմեական հնչեղություն ունի։

Մաղաքիա արք. Օրմանյանի բանախոսությունների սույն կարեւոր ժողովածուն հրատարակության է նախապատրաստել եւ ծավալուն

առաջաբանով ու հարուստ ծանոթագրություններով ամբողջական տեսքի է բերել Լիլիթ Սարվազյանը։ Անշուշտ, ծավալուն այս աշխատանքը արժանի է դրվատանքի ու գովեստի, քանի որ Մաղաքիա արք. Օրմանյանի բանախոսությունների ընդհանրական վերլուծությունը եւ ամեն բանախոսության համար տրված ծանոթագրությունները առավել ամբողջական, լիարժեք ու ընկալելի են դարձնում օրմանյանական մտքերն ու գաղափարները եւ հասանելի՝ շարքային ընթերցողին։

Ընդհանուր առմամբ ժողովածուն ընդգրկում է վեց բանախոսություններ, որոնք Մաղաքիա արք. Օրմանյանը կարդացել է 1879–1880-ական թվականներին՝ տարբեր առիթներով։ Բանախոսությունները հիմնականում նվիրված են ժամանակի ազգային հասարակական-քաղաքական կյանքի առանձնահատկություններին, հայոց ազգային պատմությանը, հայրենիքի, Եկեղեցու, հայի ինքնության, հայապահպանության գաղափարներին, հայ ժողովրդի հոգեւոր-մշակութային կյանքի հիմնախնդիրներին, ոչ միայն դրանց բարձրացմանը եւ բարձրաձայնմանը, այլ նաեւ արժեւորմանը, իմաստավորմանն ու լուծումներ գտնելուն։ Ինչպես դիպուկ նկատում է Լ. Սարվազյանը՝ «Եթէ ազգի ու Հայ Եկեղեցու ինքնագոյութեան, հայադաւանութեան անփոփոխելիութեան, հայկական աւանդական արժեհամակարգի անօտարելիութեան հիմնահարցեր մեկնաբանելիս Օրմանեանը ազգային-պահպանողական է, ապա ազգի առաջադիմութեան ու զարգացման խնդիրներ լուծելիս նա հանդէս է գալիս որպէս ազատախոհ յեղափոխական-քաղաքական գործիչ» (էջ 6)։

Հարկ է ուշադրություն դարձնել այն կարեւոր հանգամանքին, որ խնդրո առարկա բանախոսությունների հնչեցման կամ հրապարակման ժամանակահատվածը 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Հայկական հարցի միջազգայնացման եւ քննարկումների նոր մակարդակի բարձրացման շրջանն է, որը ոգեւորել էր հայության մեծ մասին, եւ որից, անշուշտ, անմասն չէր կարող մնալ նաեւ Մաղաքիա արք. Օրմանյանը։ Ինչպես ժամանակի առաջադեմ մտավորականների մեծ մասը, այնպես եւ մեծանուն գիտնական-հոգեւորականն իր պարտքն էր համարում Հայկական հարցին անդրադառնալը եւ սեփական մտորումների ու մոտեցումների շրջանակում լուծումներ առաջարկելը։ Սեփական ժողովրդի ճակատագրով մտահոգ յուրաքանչյուր հայի նման՝ նա եւս կամենում էր իր նպաստը բերել ոչ միայն Հայկական հարցի արդարացի լուծմանը, այլ նաեւ փորձում էր ոգեշնչել ու ոգեւորել հայության ստվար

զանգվածներին՝ ազգային խնդիրների լուծմանն ուղղված քայլերը եւ ջանքերը կրկնապատկելու բուռն ցանկությամբ։

Առաջին բանախոսությունը՝ «Հայուն անցեալը, ներկայն եւ ապագայն», նվիրված է հայության ինքնության հիմնահարցերին, հայոց պատմության իմաստավորմանը եւ քննական վերլուծությանը, հայ ժողովուրդ, ազգ, հայրենիք հասկացությունների հստակեցմանն ու սահմանմանը։ Մաղաքիա արք. Օրմանյանը կարծում է, որ անկախ «Հայոյն անցեալի» վերաիմաստավորումից, պատմաքննական վերլուծությունից եւ պատմության հիմնահարցերի քննարկումից՝ հայ ժողովրդի հայրենիքը Հայաստանն է (էջ 24), եւ սա է ելակետ ազգային հիմնահարցերի լուծումները գտնելու գործում։ Մանրամասն ներկայացնելով իր պատկերացմամբ հայի հարատեւության չափանիշները եւ քննելով «հայուն անցեալը» (էջ 28–30)՝ մեծանուն հոգեւորականն առաջ է քաշում այն հիմնավոր տեսակետը, որ «...Հայ ազգը առանց ունենալոյ յիւր նպաստ իշխանութեանց եւ գիտութեանց զօրութիւնները, եւ տոկալով այնչափ տառապանաց եւ դժուարութեանց որչափ ուրիշ ազգեր չկրեցին, կրցաւ ամեն ատեն յոտին պահել իւր գոյութիւնը...» (էջ 31). սա հնարավոր եղավ ի շնորհիվ հայի անհատական «ձիրքերի», որոնց շարքին հեղինակը դասում է հատկապես իր ազգությանը «յարեալ» լինելը եւ հայրենի ավանդություններին հավատարմությունը։ Եւ որքան էլ այդ անցյալը փառավոր իշխանությամբ, զորավոր պետությամբ, աշխարհակալությամբ, բարձր գիտության զարգացմամբ հանդես չի գալիս, այնուամենայնիվ, հայը կարողացել է իր «բնական ձիրքերի» գործածության շնորհիվ պահպանել իր ազգությունը։ Դարերի ընթացքում «ազգ» կոչվելու իր նվաճած իրավունքով հայությունը ներկայանում է Եւրոպային եւ իր հաստատուն տեղը գտնում քաղաքակիրթ ազգերի շարքում։ Հայության համար, փաստորեն, «...չպակսիր այսօր տարր մը որ քաղաքակրթեալ ազգ մը կազմելու համար կը պահանջուի» (էջ 34)։ Մաղաքիա արք. Օրմանյանն այդ տարրերից է համարում հայոց լեզուն, որը «...յարմար է դարուս լուսաւորութեան եւ դիւրըմբռնելի հասարակ ժողովրդեան...» համար եւ կարող է լիարժեք ներկայացնել գիտության, գրականության, մշակույթի, արվեստի, քաղաքական մտքի նվաճումները։ Նույնիսկ դարեր ի վեր զենք չբանեցրած ազգ լինելով՝ անհրաժեշտության դեպքում հայությունը պատրաստ է տալ նաեւ նշանավոր զինվորականներ, ինչպիսիք են, ըստ հեղինակի, Ռուսաց կայսրության բանակում իրենց

անունը փառքով պսակած Մաղաթովը, Բեհբությանը, Լազարեւը, Տեր-Ղուկասովը եւ այլք։

Հայության ներկան, Մաղաքիա արք. Օրմանյանի կարծիքով, ամուր է հենց այն մտավոր դիրքով, որ յուրաքանչյուր «կենդանի ազգ» պետք է ունենա տվյալ դարաշրջանում։ Մաղաքիա արք. Օրմանյանն այդ հարցում հատկապես կարեւորում է 1860 թ. Սահմանադրությունը, «որով Հայ ազգին վարչութիւնը ժողովրդական տարբեր միջամտութեամբ բարեխառնեցաւ, եւ նոր ժամանակաց պահանջման համաձայն կազմակերպեցաւ, եւ եղեւ քաղաքական դրից գոնեա անկատար կերպարան» (էջ 37)։ Նույն կարգավիճակում են նաեւ բողոքական եւ կաթոլիկ հայերը Օսմանյան կայսրությունում։ Ռուսահպատակ հայության համար հեղինակը կարեւորում է այն ներքին ինքնավարությունը, որն ընձեռել է Ռուսական կայսրությունը, եւ որի շնորհիվ զարգացման բարենպաստ պայմաններ են ստեղծված հայության այս հատվածի համար։ Ինչպես դիպուկ նկատում է մեծանուն հոգեւորականը՝ երբ հայության նկատմամբ այս կարեւոր քաղաքական դիրքորոշումը դառնում է պետության հետ հարաբերությունների հիմք, ապա նրանց տերությունների բարորության համար ծառայող հայության երեւելի դեմքերն իրենց երկար սպասել չեն տվել եւ չեն տալիս։ Թե՛ Եգիպտոսում, թե՛ Օսմանյան եւ Ռուսական կայսրություններում, թե՛ Պարսկաստանում բազմաթիվ են նշանավոր հայերը, որոնք իրենց պաշտոնավարությամբ նպաստում են այդ տերությունների բարգավաճմանն ու զարգացմանը։ Եւ եթե հայի բնավորության ինչ-ինչ գծեր ոմանք կարող են ներկայացնել դրական կամ բացասական կողմերով՝ հայությանը ամբաստանելով կամ գովաբանելով, նրան հեզ ու խոնարհ նկատելով, ապա Մաղաքիա արք. Օրմանյանը կարեւորում է հայ ազգի ներկա վիճակը, երբ արդեն առկա է պայքար, բողոք, արդարության պահանջ։

Ազգի դիրքը քննելու համար Մաղաքիա արք. Օրմանյանը առանձնահատուկ ուշադրության է արժանացնում հոգեւոր կյանքը՝ հանգելով այն կարեւոր եզրակացությանը, որ ԺԹ. դարում ազգային միությունը «...չկախուիր ոչ հանգանակին բառերէն եւ ոչ ալ եկեղեցական նուիրապետութեան դասակագութենէն» (էջ 39)։ Հայ եկեղեցականությունը հայ հասարակության անբաժան մասն է, նրա լավ ու վատ օրերի, հաջողությունների եւ դժբախտությունների մասնակիցն ու կիսողը, ուստի պատահական չէ եւրոպացիների համար զարմանալի այն իրողությունը, որ

Հայկական հարցը համաշխարհային հանրության առջեւ բարձրացնողները Կ. Պոլսի պատրիարքն ու երկու արքեպիսկոպոսներն են (նկատի ունի Բեռլինի վեհաժողովը, էջ 41)։ Քննարկելով ժամանակի հայության ներկան եւ ամբողջական վերլուծության ենթարկելով հայ հասարակական կյանքի տարբեր եւ բազմազան ոլորտներն ու բնագավառները՝ Մաղաքիա արք. Օրմանյանը առաջարկում է հայության զարգացման մի շարք կարեւոր նախապայմաններ, որոնց հիմքում պետք է լինի «...յառաջադիմութիւն, այդ բնական նպատակը, զոր յաւիտենական օրէնք տիեզերաց հաստատած են ամեն իրաց վրայ...» (էջ 45)։ Այդ ճանապարհին առաջին ու կարեւոր գործը ազգային կրթությունն է. «Ազգերնիս կրթեմք... գիտցող եւ կարող ընեմք, երբ գիտնայ եւ կրնայ, նա ինքնին կը գտնայ ընելիքը ինչ որ ժամանակին հարկը կը պահանջէ...» (էջ 47)։ Դրա համար անհրաժեշտություն է «նախնական, երկրորդական եւ բարձր» վարժարանների գոյությունը, որոնցից նախնական վարժարաններն առկա են, բայց դրանց թվաքանակը բավարար չէ ազգային երկարաժամկետ խնդիրներ լուծելու համար։ Կարեւորելով ազգային կրթությունը՝ Մաղաքիա արք. Օրմանյանը առաջնային է համարում հատկապես «երկրորդական» վարժարանների ստեղծումը՝ «Հայուն ապագայն եթէ բարձր է, այդ բարձրութեան ելլալու սանդուղին մէկ ոտքն ալ երկրորդական վարժարան մը պիտի ըլլայ», որին ապագայում պետք է հաջորդեն «բարձր վարժարանները» (էջ 50–51)։ Հատկապես կարեւոր է օրմանյանական այն դիտարկումը, որ առաջնահերթություն համարվող տարբեր մակարդակի վարժարանների միջոցով հայության զարգացումը պետք է ապահովվի առաջին հերթին Հայաստանում՝ հայրենիքում, հայկական թշվառ եւ խեղճ գավառներում, որտեղ արդեն իսկ որոշ կազմակերպություններ («Արարատեան ընկերութիւնը») ծավալում էին նկատելի գործունեություն։ Կարեւորվում է նախակրթարաններում հայերենով եւ հայեցի ուսման ու դաստիարակության խնդիրը. օտարալեզու կրթության դեմ պայքարող Մաղաքիա արք. Օրմանյանն այն հետեւողական տեսակետին է, որ ազգային կրթության հիմքը հայերենն է։ Իհարկե, միայն կրթությունը բավարար չէ ազգային տարաբնույթ խնդիրները լուծելու համար, սակայն դա այն պարարտ հողն է, որի վրա ձեւավորվելու է հայի ապագան սեփական հայրենիքում։

Սույն հրատարակության երկրորդ բանախոսությամբ՝ «Հայութեան հոգին», Մաղաքիա արք. Օրմանյանը ներկայացնում է հայությունը,

ազգը առավել լավ ճանաչելու նպատակով, քանի որ այս դեպքում ընթերցողը հայի կրթությամբ զբաղվողն է։ Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ հայության հոգին «Հայ անհատի սեփհական հոգեկան յատկութեանց, եւ Հայ անհատներու իրարու հետ յարաբերութեանց բովանդակութիւնն է» (էջ 76)։ Եւ թեպետ այդ հատկություններն ու հարաբերությունները մասնավոր են, այնուամենայնիվ, դրանցից ընդհանուր բարոյական օրենքն է առաջ գալիս, ինչպես որ բնական դեպքերից ու երեւույթներից՝ բնական օրենքը։ Բարոյական օրենքն ուսումնասիրող բարոյագիտությունը, ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի, «առհասարակ մարդկութեան վրայ կխօսի», սակայն իր նպատակը «հայ ազգը հետազոտելն է», ինչը նա անվանում է ազգագիտություն կամ հայագիտություն։ Նա չի ընդունում այն մոտեցումը, երբ հայ անհատը, որը քիչ թե շատ ծանոթ է սեփական պատմությանը, սկսում է խորհրդածել հայի մասին եւ նրան ներկայացնում է կա՛մ մեծարելով, կա՛մ նսեմացնելով։ Հային գովերգողները «աւելի բանաստեղծական արդեանց վրայ կը հիմնեն իրենց խօսքերը» (էջ 78), քան թե բուն բարոյական արժեքների, որի հետեւանքով երբեմն հասնում են ողբասացության աստիճանի (Մաղաքիա արք. Օրմանյանը նրանց անվանում է նոր Խորենացիներ եւ Լաստիվերցիներ)։ Մյուս չափազանցությունն այն է, որ ոմանք, հայի մասին խոսելով, շեշտում են նրա անհատական դրական հատկանիշները, ինչպես նախորդ բանախոսության մեջ էր Մաղաքիա արք. Օրմանյանը նշում՝ «ձիրքերը», սակայն միաժամանակ ընդգծում է, որ դրանք, ավաղ, չեն գիտակցվում եւ կիրառվում ըստ արժանվույն՝ հանգեցնելով անմիաբանության, մատնության, տարատեսակ դժբախտությունների. «...Հայ ըսել անմիաբան ըսել է. թէ Հայոց մէջ ամենայն ոք առաջին ըլլալ կուզէ՛, իսկ երկրորդ՝ եւ ոչ ոք. թէ Հայք ամեն դժուարութենէ կը վհատին. թէ Հայք սկսիլ գիտեն, բայց պահպանել եւ յառաջ տանիլ չեն գիտեր» (էջ 79)։

Մեծանուն հոգեւորականը համոզված է, որ հայության հոգու մի մասը մեզանից յուրաքանչյուրի ներսում է, ու շատ կարեւոր հարցադրում է անում. «Կզգա՞ք դուք ձեր ներսը այնպիսի հոգի մը ուսկից բլորովին մերժուած ըլլան միաբանութիւնը, չափաւորութիւնը, արիութիւնը եւ յարատեւութիւնը» (էջ 79), եւ եթե որեւէ մեկը չի զգում դա, ապա ինչո՞ւ պետք է այն տարածվի ողջ հայության վրա. «Ինչո՞ւ, հայեր եւ հայուհիներ, ինքզինքնիդ իբր բացառութիւն ենթադրելով, յօժարակա՞մ էք ընդհանրութիւնը մեղադրել» (էջ 80)։ Մաղաքիա արք. Օրմանյանն ընդունում է հային

բնորոշ եւ պատմական տարբեր դարաշրջաններում բացասական հետեւանքներ թողած բնավորության գծերը, բայց միաժամանակ նշում, որ բոլոր ժողովուրդների դեպքում էլ «...պատմութիւն չկայ, որ իւր անուան անարգանք առթող գործեր չունենայ. պետութիւն չկայ, որ զղջալու առիթ եղող պատահարներ չողբայ. եւ հիմակ ալ ամեն տեղ եւ ամեն կողմ հակառակութիւնք կը տիրեն եւ ընդդիմութիւնք կը թագաւորեն» (էջ 82)։ Զորավոր եւ հզոր ազգերում էլ («լատին եւ գերմանացի ազգաց») պառակտում կա, նրանց պատմությունը եւս ուղեկցվել է սեփական թագավորությունը օտարի ձեռքը հանձնելով, բազմաթիվ փոքր իշխանությունների բաժանվելով եւ այլն. որպես հայության ոգու ջատագով՝ Մաղաքիա արք. Օրմանյանն ունի մի զորավոր փաստարկ. «Ազգ մը որ կայ, եւ կայ ոչ իբր պատմական յիշատակ, այլ իբրեւ կենդանի եւ քաղաքական կենօք ճոխացեալ ազգ մը, իւր այդ կացութեան համար երկու պատճառաց միայն պարտաւոր կրնայ համարուիլ՝ կա՛մ արտաքին յաջողութեանց, կա՛մ ներքին յատկութեանց» (էջ 83)։ Արտաքին հաջողությունների շարքին Մաղաքիա արք. Օրմանյանը դասում է իշխանությունը, հզորությունը, տերությունը, պաշտպանությունը եւ հարստությունը, իսկ ներքին հատկությունների շարքին՝ արիությունը, հարատեւությունը, չափավորությունը եւ միաբանությունը։ Եւ եթե հայ ազգը գոյություն ունի եւ ներկայանում է իբրեւ «քաղաքական ազգ», ապա դրանում առավելաբար մեծ է «ներքին արդիւնքն ու արժանիքը», հայի «հոգւոյն յատկութիւնքը»։ Պետականության բացակայության պայմաններում հայության հոգին կարողացավ այնպիսի միջոցներ ստեղծել, «որ ազգս կրցաւ իսկ մրցիլ ի մասին յառաջադիմութեան այն ազգաց հետ՝ որք իրենց ձեռնտու ունեցան զօրաւոր իշխանութիւններ եւ բարձր հովանաւորութիւններ», եւ հայության «հոգին ընտիր է» այնչափ, որ «ամեն կերպ յառաջադիմութեանց եւ ամենեցուն ակնկալութեանց համապատասխանելու ընդունակութիւնը լիովին ունի» (էջ 93)։ Մաղաքիա արք. Օրմանյանը համոզված է, որ հայության հոգին ունի «բնական արթնութիւն»՝ վտանգի պահին ելք գտնելու, «սրտի արիութիւն»՝ բռնության եւ դժբախտությունների դեպքում հույսը չկորցնելու, «աննկուն յարատեւութիւն»՝ ազգությունը, կրոնը, լեզուն եւ սովորույթները պահպանելու, «միաբանութիւն»՝ բարին գործելու եւ ընդհանուր բարիքը պահպանելու (էջ 94–95)։ Եւ վերոնշյալ եւ այլ հատկություններն են, որ հայությանը պահել են, հնարավորություն տվել թեկուզ եւ մասնավոր դեպքերում «սպարապետութիւններ,

իշխանութիւններ, թագաւորութիւններ, եւ ինքնօրէնութիւններ հաստատել եւ պաշտպանել», հարատեւել, գոյատեւել ու առաջադիմել։ Հայության հոգին զարգացնելու առաջին եւ գլխավոր միջոցը մեծանուն հոգեւորական-գիտնականը համարում է հոգու կրթությունը՝ նախ «մանկական հասակի մէջ», այնուհետեւ՝ հասուն տարիքում՝ գործածելով «լուսաբանութեանց, հրատարակութեանց, քարոզութեանց, ժողովոց, ընկերութեանց, գործառնութեանց եւ այլ միջոցներ» (էջ 101)։ Դաստիարակությունը պետք է լինի ազգային՝ լեզվով, բովանդակությամբ, ուսմունքով եւ ուսուցիչներով, «երկրորդական եւ բարձրագոյն ուսումն ալ ազգայինի վերածելու աշխատիլ. ազգային մամուլը հարստացնել, ազգային ընտիր եւ օգտակար լրագրաց ձեռօք հանապազօր ազգային ճաշակ տպաւորել երիտասարդութեան սրտին մէջ»։

Բանախոսության վերջում Մաղաքիա արք. Օրմանյանն առաջարկում է միասնական գործելու եւ սեփական գործողությունները արդյունավետությամբ պսակելու ուղեցույց. համազգային հարցերի լուծման համար բոլորը պետք է գործեն միասնական, «ամենայն ոք մտածէ, ամենայն ոք փութայ, ամենայն ոք գործէ, իւրաքանչիւրնիս իւր կարողութեան համեմատը կատարէ» (էջ 111)։ Երկուսը երեքին միանալով շատանան, խմբերն ընկերություններ ստեղծեն, ձեւավորվի հասարակություն, որով ազգը «միանայ եւ զօրանայ»։

Սույն ժողովածուի հաջորդ՝ «Միութիւն հայութեան» բանախոսությունը արծարծում է նախորդ բանախոսություններում քննարկման առարկա դարձած հիմնախնդիրներից մեկը՝ ազգային միասնության հարցը՝ անդրադառնալով հայոց պատմության տարբեր շրջանների վերլուծությանը։ Սա այն հիմնահարցն է, որն ամենացավոտն է հայության կյանքում, եւ որի պատճառների պատմաքննական վերլուծությունը Մաղաքիա արք. Օրմանյանի համար դառնում է այս բանախոսության առանցքային գաղափարը։ Նա նախ փորձում է հասկանալ եւ վեր հանել հայության անմիաբանության հիմնական պատճառները՝ պատմության քառուղիներում դիտարկելով հայ ժողովրդի միության խնդիրը։ Ազգային միասնությունը խախտվել է այն օրվանից, երբ հայության կենտրոններ էին դարձել անջատ-անջատ հաղես եկող հայկական թագավորությունները, երբ «Ռուբինեանք Կիլիկիոյ լերանց ամրութեանց ապաւինեալ Հայութիւն մը կազմեցին, տակաւին չկրցան եւ չյաջողեցան ընդարձակ Հայութեան կեդրոն լինել...» (էջ 123)։ Ազգային պառակտումը

բազմաթիվ պատճառներ ունի՝ սկսած այլադավանությունից, վերջացրած մշակութային ազդեցություններով։ Տարատեսակ բաժանումների հետեւանք է ԺԹ. դարավերջի այն իրողությունը, որ հայերը բաժանված են եկեղեցիներով, պետություններով, լեզվով, իշխանությամբ եւ այլ պարագաներով (էջ 127)։

Մաղաքիա արք. Օրմանյանը ցավով մատնանշում է հայության կրոնական տարբեր համայնքների գոյությունը. վերջիններս, եթե նոր դարաշրջանում տեղավորվում են ազգերի կրոնական ազատության շրջանակում եւ հանդուրժելի են այլ պետություններում, ապա հայ իրականության մեջ դարձել են ազգային բաժանման, պառակտման եւ փոխադարձ թշնամական վերաբերմունքի պատճառ։ «Հայոց եկեղեցական բաժանմանց» վերաբերյալ իր տեսակետները կոչելով «ազգասիրի» տեսություններ՝ Մաղաքիա արք. Օրմանյանը առաջին հերթին կարեւորում է կրոնն իբրեւ աստվածային հաստատություն՝ դրանից բխեցնելով նաեւ աշխարհակարգն ու ազգային միասնությունը։ Այս դեպքում Հայ Եկեղեցու հայրը նկատում է, որ իսլամն արդեն հայությունից գողացել է նրա «անթիւ զաւակաց բազմութիւններ», եւ «...ինչո՞ւ Քրիստոսի հաւատքն ալ գործի ընել հայութենէ նոր մասեր բաժնելու» (էջ 130)։ Նրա հայրենասիրական կոչն է հայերին՝ ոչ թե բաժանվել հանուն Քրիստոսի, այլեւ պատվել Տիրոջը ազգային միասնությամբ, թեեւ դավանաբանական պատկերացումներն ու մոտեցումները կարող են տարբեր լինել եւ մնալ (էկումենիզմի այս յուրատեսակ գաղափարները հետագայում՝ Ի. դարում, պետք է կյանքի կոչվեին քրիստոնեական եկեղեցիների միությանը միտված շարժումներում)։

Հայությունը բաժանված է նաեւ աշխարհագրորեն, բազմաթիվ եւ տարատեսակ աղետների պատճառով հայրենի եզերքը լքած եւ օտար երկրներում ապաստանած հայն աստիճանաբար կորցնում է ազգային դիմագիծը, հեռանում ազգային սովորույթներից, ավանդույթներից, լեզվից ու կրոնից, ինչը, ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի, զարմանալի չէ, քանի որ «եթէ Շամբաթայ, Ադրամելեքի, Սանասարայ եւ Մամգունի զաւակք, Հայաստանի մէջ մնալով բնիկ հայազգի Բագրատունիք, Արծրունիք, Սասունցիք եւ Մամիկոնեանք կրցան ըլլալ, իրենց հրէական՝ ասորեստանեայ եւ ճենացի ազգութիւնը կորսնցնելով, ինչո՞ւ բնիկ հայազգին ալ օտարազգի չըլլայ օտարազգեաց մէջ գաղթելով եւ անոնց հետ ազգախառնութեամբ ընտելանալով» (էջ 131)։

Հայության անմիաբանության պատճառները սրանով չեն սահմանափակվում, քանզի հայը, որտեղ որ իրեն հայ է պահում, միաժամանակ իր համար նոր հայկական կենտրոն է ստեղծում՝ զարգանալով եւ տվյալ աշխարհի լիարժեք մասը դառնալով։ Սակայն դա հայության միությանը վնաս է բերում, քանզի «ոչ ոք այլ եւս կը յիշէր իւր նախնի հայրենիքը, իւր օտարութեան մէջ ալ գոհ կրնար ըլլալ, երբ երբեմն լեզուաւ եւ երբեմն Եկեղեցաւ, եւ երբեմն ալ սրտով ու մտքով զինքն Հայութեան հետ յարաբերութեան մէջ կը տեսնէր» (էջ 131–132)։ Եւ այս բաժանման գլխավոր վնասն այն է, որ դատարկվել է հայրենիքը՝ հայության գոյության գլխավոր կռվանը, Հայաստանը օտարների համար դարձել է անհայտ մի վայր, քանի որ հայերն ամենուր են։ Մաղաքիա արք. Օրմանյանը եւս մեկ անգամ շեշտում է այն կարեւոր դրույթը, որ հայության հայրենիքը միայն Հայաստանն է, եւ հայության միասնությունը միայն հայրենիքում է հնարավոր։

Այնուամենայնիվ, Մաղաքիա արք. Օրմանյանը, պառակտումն ու անմիաբանությունը հավասարապես համարելով հայության միության դեմ մարտնչող հիմնապատճառներ, կարծում է, որ դրանք չպետք է շփոթել, ինչպես չի կարելի շփոթել մարմինն ու հոգին, բնականն ու բարոյականը եւ «Հայութեան միութիւն ըսելով ուրիշ բան չկրնար իմացուիլ, բայց թէ այդ բաժանումները բառնալ կամ դարմանել» (էջ 138)։ Նա առանձնացնում է բաժանման չորս ձեւ՝ «Եկեղեցաւ, ազգաւ, տեղեաւ եւ պետութեամբ», եւ իրավամբ շեշտում այն ցավալի իրողությունը, որ դրանց վերացումն ու ազգային միության կայացումն առնվազն իրատեսական չեն, քանի որ եկեղեցական միությանը դեմ է խղճի ազատության մասին օրենքը, ազգային միասնությանը դեմ են Օսմանյան կայսրության օրենքները, «տեղեաւ» եւ «պետութեամբ» միության համար խոչընդոտ են դարերով ձեւավորված օրենքներն ու միջազգայնորեն ընդունված իրավական կարգավորումները։ Հայության միասնության համար այս ցավալի իրողություններն էլ հաշվի առնելով՝ Մաղաքիա արք. Օրմանյանը եզրակացնում է, որ հայության առկա բաժանումները կշարունակվեն այնքան, քանի դեռ աշխարհը շարունակում է պահել այն կարգը, որն առկա էր ԺԹ. դարավերջին։ Սակայն, սա բնավ էլ վհատության պատճառ չէ, եւ հեղինակը համոզված է, որ հետեւողական ու երկարատեւ աշխատանքի արդյունքում կարելի է հաղթահարել նշյալ բաժանումների հետեւանքները եւ հասնել բաղձալի միության։ Այդ դժվարին ճանապարհն անցնելու

համար կարեւորվում է կրթությունը, սեփական ուժերին ապավինելը, հայկական գավառները բարեկարգելն ու շենացնելը, պանդխտության վերացումը կամ արտագաղթի նվազումը եւ այլն։ Մեծանուն հայագետը այդ շարքում հատկապես առանձնացնում է այն ընկերությունների գործունեությունը, որոնք Հայաստանում կրթությունը տարածելու համար են հիմնվել՝ Արարատյան, Դպրոցասիրաց Արեւելյան, Կիլիկյան, եւ արդեն քսանչորս վարժարան ունեն Վասպուրականում, Տարոնում, Տավրոսում եւ Կիլիկիայում։ Հաջորդ կարեւոր քայլը այդ կրթական հաստատությունների թվաքանակի ավելացումը եւ ազգային տարատեսակ ընկերությունների գործունեության ընդլայնումն է, որի վերջնակետը պետք է լինի այն, որ ամեն «հայ հաւասարապէս՝ Հայաստանը բարեկարգելու եւ հայաստանցիները կրթելու, Հայաստանը զարգացնելու եւ հայաստանցիները երջանիկ ընելու բաղձանքով վառուի» (էջ 156). յուրաքանչյուրը, որ իրեն օտար երկրի համար բնիկ է կարծում, պետք է համոզվի, որ իր նպատակը Հայաստանը եւ նրա բարօրությունն է։ Հայրենիքից դուրս գտնվող հայության հնարավորություններն ու միջոցները պետք է փոխադրվեն Հայաստան եւ ծառայեն տեղական բաժանումների վնասները վերացնելուն։

Բավականին բարդ է տարբեր պետությունների կազմում գտնվող հայության միավորումը, քանի որ, ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի, եթե նույնիսկ բոլոր հայերը հայրենիքում կենտրոնանան, այնուամենայնիվ, նրանք կշարունակեն գտնվել երեք պետության՝ Օսմանյան կայսրության, Ռուսական կայսրության եւ Պարսկաստանի տիրապետության ներքո։ Այս դեպքում էլ մեծանուն հոգեւորական-գիտնականին հուսադրում է այն, որ նշյալ տիրակալությունները ստեղծել են նպաստավոր պայմաններ հայապահպանության եւ զարգացման համար։ Ուստի, եթե «ուզեմք, առանց իրաց ներկայ դիրքը աւրելու, եւ առանց դիւանագիտական եւ զինագիտական խնդրոց տեղի տալու, նոյն իսկ պետութեամբ բաժանեալ Հայաստանի մէջ Հայութեան միութիւնը պահպանեմք եւ պաշտպանեմք, վայելելով այն յարաբերութեանց ազատութիւնը, որ վերոյիշատակեալ առանձնաշնորհութեանց արդիւնք են...» (էջ 159)։

Մաղաքիա արք. Օրմանյանը, մանրամասն ներկայացնելով հայության միասնությանը խոչընդոտող հիմնական բաժանումները, կարծում է, որ եթե նույնիսկ քաղաքական կամ եկեղեցական զգալի միություն կազմելն անհնար է, այնուամենայնիվ, պետք չէ վհատվել, քանզի «կարող

եմք բաժանմանց դէմ հակակշիռ դարմաններ պատրաստել, եւ բաժանմանց ներքեւ ալ միութիւն գործադրիլ...» (էջ 160)։

Ներկայացվող ժողովածուի հաջորդ՝ «Հայ ազգութիւն» բանախոսությունը Մաղաքիա արք. Օրմանյանը ներկայացրել է Արամյան վարժարանում՝ 1979 թ.։ Այս բանախոսությամբ նա փորձում է վեր հանել հայ ժողովրդի ազգային առանձնահատկությունները, հայության հոգեւոր էությունը։ Ինչպես նախորդ բանախոսությունների դեպքում, այնպես եւ այստեղ Մաղաքիա արք. Օրմանյանի բարձրաձայնած հիմնախնդիրները վերաբերում են հայ ժողովրդի պատմությանը, հայության միասնականությանը, ազգային տարատեսակ հիմնահարցերին, հայրենիքի գաղափարին, լեզվին, մշակույթին, կրոնին։ Հեղինակը նշում է այն փոփոխությունները, որոնք հայը կրել է պատմության ընթացքում։ Պատմության քննությունը ինքնանպատակ չէ, այն նաեւ ազգապահպանության հիմքն է, փառահեղ անցյալը նաեւ ուսանելի է. եթե տարբեր ազգերը՝ հույները, բուլղարացիները, ալբանացիները եւ այլն, հետամուտ են իրենց ազգային խնդիրներին, ապա հայը եւս կարող է ազգային խնդիրներն ի լուր աշխարհի բարձրաձայնել ու համարձակորեն պաշտպանել։ Մաղաքիա արք. Օրմանյանը եւս մեկ անգամ վեր է հանում ազգային կենտրոնի գաղափարը եւ ցավով նշում, որ «...ամենուստեք արգելիչ պարագայք եւ դժբաղդ բաժանմունք խափանարար կը կանգնին» այն ունենալու համար։ Սակայն «...հայութիւնը ազգութեան ամեն ձիրքերը յինքն կը պարունակէ», հատկապես՝ «գոյութեան ձիրքը» (էջ 178)։ Ազգության գոյության կարեւոր գրավականներն են ավանդությունն ունենալը, մեծաքանակ լինելը, լեզուն, կենտրոնը, կազմակերպվածությունը, փոխադարձ կապը եւ ընդհանուր նպատակը։ Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ եւրոպական ազգերի ընկալմամբ դրանց պետք է հավելել նաեւ «պետություն» եւ «ազգ» հասկացությունների միասնական ըմբռնումը (տարբեր ժողովուրդներ մեկ պետության կազմում կարող են ընկալվել որպես մեկ ամբողջություն), որը, սակայն, հայ իրականության համար կիրառելի չէ, քանի որ եւրոպական երկրներում պետական սահմանները չեն նույնանում ազգային սահմաններին։

Պատմության փառահեղ էջերն ուսանելի ու ոգեւորիչ են, սակայն պակաս ուսուցողական չեն նաեւ ոչ փառավոր ավանդությունները, ուստի «մեր անցելոյն յիշատակը երկու գլխաւոր դասեր կուտայ մեզի. եւ այս են. առաջին թէ Հայութիւնը ի՞նչ աստիճանի ընդունակութիւններ

ունի ազգութեան ասպարէզին մէջ. եւ երկրորդ թէ Հայութիւնը ինչ աստիճանի տեւողականութիւն ունի չարագուշակ արկածից ասպարէզին մէջ։ Երկուքն ալ բաւական են ոչ միայն զմեզ մխիթարել, այլ եւ քաջալերել եւ ի գործ յորդորել» (էջ 183)։ Մաղաքիա արք. Օրմանյանը համոզված է, որ ազգի ձեւավորման համար խիստ կարեւոր է նաեւ ազգի բազմությունը։ Եւ եթե չորս հարյուր միլիոնանոց Չինաստանի կողքին պետություն ունի նաեւ երկու միլիոնանոց դանիացի ժողովուրդը, ապա չորս միլիոնանոց հայությունը, անկասկած, արժանի է ազգ կոչվելու եւ պետություն ունենալու։ Զարգացնելով հային պատմականորեն ազգ կոչելու հիմնավորումները՝ նշանավոր հայագետը հերթական անգամ կարեւորում է հայության կենտրոն Մայր հայրենիքի՝ Հայաստանի գաղափարը՝ հստակ ուրվագծելով նաեւ հայրենիքի սահմանները, որոնք նույնական են պատմական Հայաստանին. «Հայուն Հայաստանը անբռնաբարելի է, թէպէտ եւ իւր սահմանաց մէջ օտարք մտած ըլլան, կա՛մ բնիկք օտարացած» (էջ 188)։

Նա վստահորեն փաստում է, որ հայը թե՛ պատմականորեն, թե՛ քանակով, թե՛ լեզվով եւ թե՛ ընդհանուր կենտրոն ունենալով՝ կարող է ազգություն կոչվելուն հավակնել։ Հարկ է նշել, որ Մաղաքիա արք. Օրմանյանը, ի վերջո, այդպես էլ չի հանգում Հայոց պետականության ստեղծման գաղափարին, ինչը որոշակիորեն ակնկալելի է նրա ապրած ժամանակահատվածի համար, երբ դեռ նոր-նոր պետք է խմորվեին ընդհանուր հայրենիքում անկախություն եւ պետականություն ունենալու գաղափարները։

Բանախոսության մեջ ազգային նպատակները սահմանելիս Մաղաքիա արք. Օրմանյանը լավատեսորեն է տրամադրված եւ հայությանը բնութագրում է «...իբրեւ մի թշուառ եւ հիւանդագին անձն, որ ապաքինելու եւ իւր գործերը կարգադրելու սկսած է. որ ի մօտոյ առողջ եւ բարեկեցիկ ըլլալուն վրայ ապահով է, եւ որոյ կեանքը ամենեւին վտանգի նշան մը ցոյց չտար» (էջ 193. ինչ իմանար մեծ հայը, որ դեռ իր կենդանության օրոք պետք է տեսներ հայության մեծագույն ողբերգությունը)։

Սույն ժողովածուի վերջին երկու բանախոսությունները՝ «Կարօտ եմք» եւ «Հայ երիտասարդութիւն», արծարծում են հայության հիմնախնդիրների լուծմանն ուղղված նոր հարցադրումներ եւ մոտեցումներ։ «Կարօտ եմք» բանախոսության թեման արեւմտահայ գավառների թշվառ եւ ծայրահեղ անմխիթար վիճակն է, հայության անտանելի կյանքը՝ կեղեքումների եւ հարստահարությունների պայմաններում։ Մաղաքիա արք. Օրմանյանը համայն հայությանը հանգանակության եւ բարեգործության

կոչ է անում՝ ի նպաստ սովյալ եւ աղքատ հայրենակիցների փրկության, կարեւորում հանգանակվող գումարի հավաքման եղանակներն ու նպատակային գործածությունը։ Նա համոզված է, որ յուրաքանչյուր հայ պետք է պատրաստ լինի իր նպաստը բերելու համազգային հրատապ խնդիրների լուծմանը։

Այլ է «Հայ երիտասարդութիւն» բանախոսությունը, որի հիմնական թիրախը հայ նոր սերունդն է, երիտասարդության առաքելությունը, նպատակները, իրավունքներն ու պարտականությունները։ Այս դեպքում եւս Մաղաքիա արք. Օրմանյանն անդրադառնում է ազգային հիմնախնդիրներին՝ հերթական անգամ փաստելով, որ հայ ազգն իր գոյության իրավունքը նվաճել է պատմականորեն։ Երիտասարդության դերակատարությունը դժվար է թերագնահատել, եւ չնայած Մաղաքիա արք. Օրմանյանի համար հստակ չեն երիտասարդության տարիքային սահմաններն ու սահմանումը, սակայն ակնհայտ է, որ «երիտասարդութիւնը ազգութեան մը եւ որ եւ իցէ ընկերութեան գլուխը չէ. բայց երիտասարդութիւնն է ազգութեանց եւ ամեն ընկերութեանց ձեռքը. եթէ առաջնորդ չէ, բայց գործադիր ինքն է» (էջ 262)։ Երիտասարդությունն է ազգային առաջադիմության եւ զարթոնքի գլխավոր գրավականը, նա է ազգային նպատակների իրագործողն ու կերտողը։ Մաղաքիա արք. Օրմանյանը առաջին հերթին կարեւորում է երիտասարդության հայեցի դաստիարակությունը, հոգեւոր-բարոյական զարգացումը. երիտասարդության աննկուն ու հետեւողական քայլերով պետք է ակնկալել ազգային հիմնահարցերի լուծումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում։ Եւ թերեւս ամենախոսունը հենց այն ակնկալիքներն են, որ ունի մեծանուն հայագետը. «Ազգը կզգայ տակաւին դաստիարակութեան պէտքը. Ազգը պիտի դիմէ տարփանօք լաւագոյն ապագայի մը. Ազգը պիտի առաջնորդուի ընտիր վարչութենէ մէ. Ազգը պիտի բարեկարգէ ընտանեկան կենաց դիրքը. Ազգը պիտի ստանայ օրինաւոր բարոյական կեանք մը. Ազգը պիտի վառուի ազգային կրօնքով մը» (էջ 277)։ Եւ ազգի ճակատագրով մտահոգ երիտասարդությանն ուղղված կոչն է՝ «...ճշմարիտ յառաջադիմութիւն եւ զարգացում չէք կարող ձեր մտաց մէջ երեւակայել, եթէ ոչ ամբողջի մը իւրաքանչիւր մասանց հաւասարապէս զարգացման մէջ» (էջ 301)։ Հայ ազգն էլ, այլ ազգերի նման, բնական առաջադիմության կողքին ակնկալում է նաեւ առաջադիմություն բարոյական կյանքում, ընտանեկան հարաբերություններում, կրոնական կյանքում եւ այլուր։

Մաղաքիա արք. Օրմանյանի ազգային բանախոսությունները, անշուշտ, հնարավորություն են ընձեռում անդրադառնալու եւ քննարկելու դրանցում արծարծված տարաբնույթ ու հետաքրքիր այլ հարցեր եւս, ու այդ ամենին ընթերցողը կարող է ծանոթանալ սույն ժողովածուում։

Այսպիսով, կարող ենք վստահաբար արձանագրել, որ հրատարակվել է մի կարեւոր ու արժեքավոր ժողովածու, որը համալրելու է մեծն Մաղաքիա արք. Օրմանյանի բազմահատոր ժառանգության՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակությունների շարքը։

ՊԱՐԳԵՒ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ
ԵՊՀ, ԳՀՃ